

"Droschak"  
ORGANE  
de la Fédération  
Révolut. Arménienne.

# ԴՐԾՎԱԿ

L.S.A. ԲԻԿՐՅԱ  
ՕՐԵԱԿԱՐԱԿ  
Rédaction du "Droschak"  
L'ARMÉNIE  
GENEVE (Suisse)

## ՀԱՅ ՅԵՂԱՓՈԽԱԿ. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱԸ<sup>66</sup> ՕՐԴԱՆ

ՕՍՄԱՆԵԱՆ ՅԵՂԱՓՈԽԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ

Ս. Շ Ր Զ Ա Բ Ե Ր Ա Կ Ա Ն Ը

(ԹԱՐԴՄԱՆՈՒԹԻՒՆ ՏԱԾԿՆՐԵՆԵՆ)

Օսմանցիներ,

Կը տեսնենք՝ թէ ախով վախով ժամանակ անցնելով և ասոր պատճառ եղող բռնաւորներուն գլուխ ծռելով, կամ խրատներ կարդալով, ի՞նչպիսի սարսափելի հետեանքներ առաջ կուգան։ Մանաւանդ ամենքնիս ալ գիտենք, որ նա հարամկաթնակեր Համբար պատահածը գզելու կատղածութեան աստիճանին հասած է։

Օսմանցիներ, յայտնի է թէ կատղած շուն մը սպաննելը անհրաժեշտ է։ ԱՌԴ, "Օսմանեան Յեղափոխական Կուսակցութիւնը", որ մինչև ցարդ կզգուշանար արիւահեղութենէ, հաստատապէս որոշած է հարստահարիչներուն չափը ցուցնելու և հարստահարեալներուն վրէժը լուծելու համար՝ զենքի դիմել Աւր որ ալ ըլլայ, առաջին առիթը ներկայացածին, կուոյ սսպարեզը պիտի նետւի։ Աւրեմն, օսմանեան սիրտ կրողներ, յուսով ենք, որ յեղափոխութիւն բառը խորթչի հնչեր ձեր ականջին և նկատելով մեզ՝ իրու պարտաճանաչ ու պատւաճանաչ, ժամ առաջ կը կատարէք արդարութեան ու մարդկութեան ձեր վրայ դրած պարտականութիւնը։

Նախ և առաջ սա ալ կուզենք յայտնել՝ թէ մեր մասին ով որ գեշ խօսի, կրցած մէկ բանը եթէ մեր առաջարկած պարագային չի կատարէ, մանաւանդ—բացի անարդանքի դրօշմը կրող մեծ ու պղտիկ լրտեսները—եթէ սստիկանութիւնը կամ զինորականութիւնը յանդգնի մեր ճամբան խափանել, մահը միայն կարող պիտի ըլլայ մեզ բաժանել։ Այո՛, պիտի մեռնինք, պիտի կոտորենք, այրենք ու քանդենք. մարդէ վախ չունինք։ Մրտերն ու խիղճերը շատոնց արդէն համաձայն են ատոր։ Արդէն օրէնքը կրօնական վճիռները շատ ուղեղ ու պարզ կերպով ցոյց կուտան մեր գնալիք ճամբան . . . Աւրիշ ճար չիկայ։

Ա՛յ միայն քանի մը սև հոգիները շանսատակ հա-

նելու և գազանաբարոյ փատիշահին երլողը քանդելու և անոր մոխիրներն օդին մէջ տարտղնող ուժանակներով սպառազինւած ենք, այլև ժողովրդին վընկութեան համար ամեն զոհողութիւն յանձն առած ենք։

Ով բռնակալութեան ճնշումէն ազատւիլ ջանացող, բայց արիւն թափել չուզող հայրենակիցներ, եկէք Բ. Դուռը՝ կամ նահանգներու կառավարական պալատները լեցւեցէք. եթէ հարկ է, քաշեցէք բիրերը, սուրերը, մի՛ վախնաք . . . զի մէկ մազերնուդ դպչող վատերուն հոգին մեր ձեռքն է։ Այո՛, ոտքի կանգնէ, ով ժողովուրդ, որ մինչև ցարդ գլխիկոր մնացած ես, քչիկ մը ցոյց տուր օսմանեան կորովդ, և սրբէ ամեն կողմէ մեր ճակտին նետւած սա նախատինքը՝ թէ ոնոր օսմանցիները չունին հին օսմանցիների արիւնը։ Մեր հայրենակից հայերէն օրինակ առէք, որպէս զի անցեալները գործւած յանցանքը քաւիի, ձեռքերնիդ անոնց երկնցուցէք։ Եթէ պատիւներուդ չէք կերցներ ետևնուն գնալ, առաջնին ինկէք . . . ի՞նչ դառն է . . . այս չափ տարի է մէկզմէկու հետ ապրող, միւնոյն հողին վրայ լեծցող մեր եղբայրներուն հետ երեսի չենք կը նար նայիլ։

Ցնցւեցէք, օսմանցիներ, գոնէ Աստուծոյ երկիւղով ցնցւեցէք, և սրտի հաստատակամութիւնով մէկդի նետեցէք սա ստրկութեան բեռը։ Այդ թուլասրութիւնը վայել չէ օսմանցիութեան և միւսիւլմանութեան, արդարեւ արատ մ'է։ Ձէք ըսեր. բռնակալ կառավարութեան անգթութիւններուն զոհ դնացող հայրեր, մայրեր, եղբայրներ և զաւակներ երկու երեսն ու երկինքէն ովէժ, վրէժ" կաղաղակեն։

Գոռացէք, մանչեցէք օսմանցիներ . . . Կեցած տեղերնիդ մի՛ գամւիիք մնաք, օգնութեան հասէք տուքքերու տակ ճնշւած թշւառներուն, ծերերուն ու կտրիճներուն, որոնք քաղաքական, իրաւ կամ անիրաւ, պատճառներով կը ձերբակալին, առանց անոնց ընտանիքին ու զաւակներու ողբ ու կոծին ուշ դնելու։ Բղքտեցէք ձեր գլխուն փորձանք եղող դահիճները, որպէսզի ձեռք-ձեռքի տալով հրապարակը իսկոյն մաքրւի, որպէսզի բոլոր օսմանցիները, որոնք բանտերուն, աքսորներուն, նոյն իսկ Անատօլիի, Արարես և Բումելիի առատաբեր վսյրերուն մէջ անօթութեան ու թշւառութեան մէջ կը հեծեն, քիչ մը անդորրութեան երես տեսնեն։

Ասկէց վերջը „ի՞ր աւունք կամ մահու գոչելով, վճռապէս գործի պիտի ձեռնարկենք, արմատախիլ ընելով՝ սա բռնակալ կառավարութիւնը և հաստատելով „Խորհրդարանը“:

Դիտցած ըլլաք, մենք անմեղ ենք այլեւս:

## ՎԵՐԴԱՊԵՍ

Երկար ժամանակից ի վեր անհամբեր սպասւող ձայնը վերջապէս հնչեց: Մեր առաջն է աչա „Օսմանեան Յեղափոխական Կուսակցութեան“ անդրանիկ շըրջաբերականը, որն իր բացարձակ յեղափոխական ոգով նոր դարագլում է կազմում օսմանեան ազգի համար: Դարերից ի վեր անշարժ, տգէտ, անզգայ հոչակւած օսմանեան ազգը ու է դրել այսօր իսկական յեղափոխական ուղիի վրայ. Նա իր համարձակ զաւակների բերանով հաստատում է լուսաւոր մարդկութեան դիմաց, որ ինքը վաղեմի անփոյթ, իր ցաւերին անգիտակ, առաջադիմութիւնից խորշող կամ լուռ ու մունջ տանջլող և գթութիւն աղերսող ժողովուրդը չէ այլ ևս. Նա սկսել է ձանաշել իր դժբախտութեան բուն արմատը, տապարը ձեռքին դիմում է այդ արմատին և անձնազոհութեան ձանապարհով ձգտում իր անդորրութեան:

Այս ձայնը վաղուց պէտք է հնչէր. օսմանցիները վաղուց պէտք է հետևէին. հայերին օրինակին. դարերի ընթացքում բռնակալութիւնը ջանքեր չի խնայել յեղափոխութեան սերմերի՝ համար պարարտ հող պատրաստելու: Բայց երկար ժամանակ օսմանեան ազգը չէր կարողանում լսել և հաւատալ հայ յեղափոխականներիս. երկար ժամանակ մենք ապարդիւն ջանքեր էինք թափում՝ ցոյց տալու, թէ մեր ձգտումը չէ ձեռք բերել որ և է գերիշխանութիւն, մեր լծի տակ ձգել մահմեդական տարրը, այլ մեր նպատակն է պարզապէս Յաձկահայաստնի ազատութիւնը, նրա, մէջ ապրող բոլոր ազգերի բարելաւութիւնը: Կուի ասպարէզում թէ գործով և թէ՝ խօսքով մենք ցոյց էինք տալիս ամեն մի քայլափոխում, որ մեր կուիւր մահմեդական ժողովոդի դէմ չէ, այլ այն կառավարութեան, որի լծի տակ հեծում է նոյն այդ ժողովուրդը: Դառը կսկիծ էր տիրում մեր սրտին, երբ մեր ընկերները՝ ամենալայն գաղափարներով տոգորւած, աշխատաւոր ժողովոդի ազատութեան գործին հոգով-սրտով նւիրւած՝ տանջլու, ընկնում, նահատակւում էին այն մարդկանց ձեռքով, որոնց դէմ նրանք ոչ մի թշնամական զգացմունք չունեին, որոնց գրութեան բարոքման համար նրանք թողել էին իրենց անդորր կեանքը և նետել յեղափոխական տատասկոտ ասպարէզը:

Մահմեդական տարրը մեզ չէր հասկանում, սակայն մենք չէինք վհաստում: Դեռ համաձարակ կոտորածներից շատ առաջ, նկատելով սուլթանի գաղանի պատրաստութիւնները, մահմեդական ամբոխի անմիտ գըրդումը, մենք նախագուշակցինք հայ ազգի գլխին գալիք չարիքը և յուսահատական կոչ արինք՝ այդ չարիքի առաջն գէթ մասամբ առնելու համար՝ հասկացնել տանք մեզ մահմեդական ամբոխին: Մենք հրաւիրեցինք հայ յեղափոխական երիտասարդութիւնը՝ ձեռք տալ „Երիտասարդ Թիւրքիային“, որը մեր խորին համոզմամբ վաղ թէ ուշ պէտք է իր ձեռքը առներ յեղափոխական կարմիր գրոշակը: Սակայն ի զուր. մեր կեանքն այնպիսի հսկայական քայլերով առաջ ընթացաւ, սուլթանն այնպիսի եռանդով գործեց և հայ ազգի ու մահմեդականների մէջ եղած անդունդն այնպիսի խորութեամբ բացւեց, որ ոչ մի հնար չմնաց ոչ հասկացնելու և ոչ հասկանալու . . .

Մահմեդական տարրի լաւագոյն մասին պարզած մեր ձեռքը կամ մնում էր ոդի մէջ, կամ հանդիպում էր կուրացած ամբոխի սրին ու կրակին:

Ճիշդ է, օսմանեան ժողովրդի յառաջադէմ մասն անկարող էր հանդիսանում: Իր ողբալի գրութեան դարմանը շուտով գտնելու. Ճիշդ է, որ մեր արած ջանքերը խորտակւում էին սուլթանի մէքենայութիւններին հանդիպելով, բայց Ճիշդ է և այն, որ դարձեալ նոյն այդ սուլթանն էր, որ իր անլուր գազանութիւններով բացեց վերջապէս օսմանեան երիտասարդութեան աչքը, ոչնչացրեց այն անդունդը, որ բաժանում էր նրան հայ յեղափոխութիւնից և դրեց նրան իր կոչման բարձրութեան վրայ:

Մեծ է զօրութիւնն սուլթանի . . . նա էր, որ „Հիար-հային գազան դարձրեց ու նրա թաթերը ճանկերով զինեց. Նա է, որ այսօր խալիֆային հլու-հպատակ տաճկին ձգեց յեղափոխութեան գիրկը և ուուր դրեց նրա ձեռքը:

Այսօր տաճկին է, որ յանուն տուրքերի տակ ճնշող թշւառների գոչ է անում իր ժողովրդին և հրաւրում՝ նրան յնպանել կատղած շանը“, խորտակել Բ. Դուռը, կառավարչական հիմնարկութիւնները . . . նա է, որ յայտարարում է, թէ ժողովրդի փրկութեան համար ամեն զոհովութիւն յանձն է առած. նա է վերջապէս, որ հրաւրում է օրինակ առնել հայերից և ձեռք մեկնելով մեզ, քաւել անցեալում գործած յանցանքը:

Մենք կընդունենք մեզ պարզած ձեռքը. Նա շաղախած է անթիւ թշւառների աղի-արտասուբով, ներկւած մեր եղբայրների, մեր քոյրերի, մեր գաղափարական ընկերների թանկագին, սուրբ արիւնով. բայց մենք կընդունենք: Եւ բարոյական իրաւունք չունենք մերժելու, երբ ձեռքը այդ մեկնում է անկեղծօրէն, երբ մեկնողը

Խոստովանում է իր յանցանքները և ձգտում՝ նրանց քաւելու:

Օսմանեան Յեղափոխական Կուսակցութիւնը՝ Ռուբիկօնը անցել է: Նրա համարձակ ու վստահ ձայնն արձագանք կը գտնի երկրի զանազան մասերում ցրւած, պատեհ առիթի սպասող, գրգռւած ու վրէժխնդրութեան ծարաւ սրտերում: Տաճիկ յեղափոխութիւնը կը լայնանայ, և մենք յուսով ենք, որ օսմանցի տարրը, երկար ժամանակ բռնակալութեան ձեռքին խաղալիք դարնալուց յետոյ, այսօր սթափւած՝ աւելի կատաղաբար հարւածներ կը թափի իր արիւնը ծծողի գլխին. մենք յուսով ենք, որ հազարաւոր անմեղների անարատ արիւնով շաղախւած ձեռքը կը մաքրւի և կը մաքրւի անպատճառ. մեծ ու փոքր սուլթանների արեան մէջ թաթախնելով. մենք յուսով ենք վերջապէս, որ այսօր „միևնոյն հոգի վրայ մեծող եղբայրներուն հետ երես երեսի նայել չչամարձակող“ տաճիկ յեղափոխականը իրականապէս իր ազգի յանցանքները քաւելուց յետոյ, պարզ երեսով կը մօտենայ մեզ և արդէն մաքրած ձեռքը մեզ մեկնելով՝ կաշխատի մեզ հետ յանուն բոլոր հալածեալների և կը կռւի ընդդէմ ամեն տեսակ կեղեքիների:

Սպասում ենք, որ Օսմանեան Յեղափոխական Կուսակցութեան խօսքին շուտով հետեւ գործը:

## Դ Ա Յ Ն Ա Կ Ց Ա Խ Ե Ա Ն

Հ Ա Յ Դ Ո Ւ Կ Ա Յ Ի Ն Խ Մ Բ Ի Կ Ի Ւ Ի Բ

Ա Խ Ո Ր Կ Ա Յ Լ Ե Բ Ս Ե Ր Ո Ւ Ի

Մեղ հետ պաշար վերցնելով՝ Վարագից ճանապարհ ընկանք դէպի սահմանագլուխ. երկրորդ օրը՝ լոյս երրորդ գնում էինք դէպի Ախոռիկ: Այժմ 31 հոգի էինք. քաղաքից մեզ հետ նոր մարդիկ էլ էին միացել. 31 հոգին բաւական շատ էր, բազմաշատ քրդերի դաշտերում զգալի հետքեր թողնելու. իսկ այդ քրդերը, որ շան հոտառութիւն ունին, իսկոյն և եթ որոշում են ֆեղայիների ոտնատեղերը: Զնայելով, որ թրջւած էինք և ճանապարհը ցեխ էր, մենք անընդհատ և արագ-արագ էինք քայլում, պատճառը ցերեկւայ դիլքի հեռաւորութիւնն էր: 15 օրւայ տաժաների ճանապարհը մեզ ուժասպառ էր արած. բայց կարիքը իր պահանջներն ունի և մենք հպատակւում էինք:

Ախոռկայի մօտ, լոյսին 2 ժամ մնացած՝ յանկարծ մը յառաջախաղ մարդկանց միջից քրդերէն խօսելու ձայներ լսեցինք. ճանապարհը շեղեցինք դէպի աջ, յետոյ կրկին ուղղւեցանք. քիչ հեռու կանգնած էր մի-

քիւրդ. „ո՞վ է“, հարցրինք յառաջագնացներից, „ոչինչ պատասխանեցին նրանք, քիւրդ է. հարցրեց՝ ուր էք գնում, ասացինք „ասկեարներ“ ենք. յետոյ միայն մրտածեցինք, որ այդ պատասխանը խիստ անբաւարար է, այլ պէտք էր ուղղակի բռնել քրդին ու սպանել. ուշ էր. քրդի տւած օգուտն այն եղաւ, որ մենք աւելի արագ սկսեցինք քայլել այնպէս որ առաւօտու դէմ հազիւ միայն Ախոռկայ սարի տակ էինք, 12 ժամ՝ անընդհատ քայլելուց յետոյ Մինչդեռ մենք ճիգ էինք թափում ըստ կարելոյն շուտով բարձրանալ ուղղեցոյց յայտնեց, որ այդ տեղերում մեզ սատանան անգամ չի տեսնիլ, որովհետեւ այնտեղով անցուդարձ քիչ է լինում. ուստի հանգստանալով, դանդաղ քայլերով ելանք սարը, և մտանք մի ահագին անձաւի մէջ, մի քիչ չորացնելու մեր շորերը և քնել. բայց թրջւած մարդը կարող է քնել երկու ժամու չափ այդտեղ մնացինք, յետոյ գուրս եկանք և ձորն իջանք, որտեղից էլ պէտք է հանդիպակաց բարձրութիւնն իջնէինք և շրջւեինք միւս կողմը. այդ չարինք. շատ էինք յոգնած և նորից անձրեւ էր սպառնում. նստեցինք ձորում, մնչեւ անգամ կրակ էլ արինք, փոքր ի շատէ չորացնելու համար մեր դժբախտ շորերը, որոնց միայն թրջւելն էր վիճակւած:

Կէսօրից հազիւ մի ժամ՝ անցել էր. զանազան մտածմունքներից յետոյ, որոշեցինք այդ գիշերը շրջակայլեռներում անցկացնել. մեր դիմաց երկու քարանձաւ էր կարող է քնել երկու ժամու չափ այդտեղ մնացինք, յետոյ գուրս եկանք և ձորն իջանք, որտեղից էլ պէտք է հանդիպակաց բարձրութիւնն իջնէինք և շրջւեինք միւս կողմը. այդ չարինք. շատ էինք յոգնած և նորից անձրեւ էր սպառնում. նստեցինք ձորում, մնչեւ անգամ կրակ էլ արինք, փոքր ի շատէ չորացնելու համար մեր դժբախտ շորերը, որոնց միայն թրջւելն էր վիճակւած:

„Հօյ, Հօյ“—լերան կատարից լսեցինք խառն ի խուռն աղաղակներ. ուշադրութիւննիս դարձրինք վերև. ձիաւոր զինւորները սև մրջիւնների նման սփոււել էին մեր դիմացի սարի վրայ: Նրանց յիմարութիւնը մեզ զարմացրեց. եթէ ուղենային կարող էին առանց իրենց գոռում-գոչիւններով մեզ իմացնելու իրենց գոյութիւնը յետ դառնալ և միւս կողմից թիկունքից յարձակւելով, ահագին հարւած հասցնել մեզ, որ, հարկաւ, անհոգ նստած կը լինէինք ձորի մէջ: Բայց երբ տեսանք իրենց, առանց ժամանակ կորցնելու սկսեցինք սարը բարձրանալ, դիրքեր բռնելու համար: Այդ միջոցին սկսւեց անձրեւ սակայն այդ չէր կարող մեզ արգելք լինել՝ դիրքերնիս շուտով գրաւելու. կէս ժամից յետոյ մենք արդէն լերան վրայ էինք, քարերի յետև 3-4 տեղ դիրք բռնեցինք, միևնոյն ժամանակ հակառակ կողմից բարձրացաւ ձիաւորները և մեր դիմացի քարերում դիրք հաստատեցին:

Սկսւեց կոիւր: Խսկապէս՝ այս անգամ կոիւր էր, այն ևս սոսկալի կոիւր: Հրացանները երկու կողմից ևս որտապով մեզ շրջապատող լերանց բարձունքներն էին դլրեցնում նրանց թնդիւնները ժամագանքներով տարածւում էին երկարածիգ բարձրութիւններում և խզւում անդնդախոր

ձորերի մէջ. այդ ձայները մեր պատերազմական երաժշտութիւնն էին կազմում, և մենք անարդելով կատաղիցուրտն ու մանրափաթիլ, բքափառն ձիւնը, որոտացնում էինք մեր հրացանները, միւնոյն ժամանակ սրտագին աղաղակներ հանելով, երբ թշնամի ձիւուրը թամբից գետին էր պարզում, իր պիղծ արիւնի մէջ խեղդւելով, կամ երբ դիրքի յիւնեկց երեացողի գանգն էր ջարդում, արիւնախառն ուղեղը քարերի փառաւորներկ դարձնելով: Մենք կուում էինք, ինչպէս կարող է կուել բուռն ոգեգորութեան մէջ գտնող հայդուկը, որի աչքում իր կեանքը մազաչափ նշանակութիւն չունի. ձիւնախառն քսմու շվվոցի և հրացանների բումբիւնների հետ միացյած մեր ձայները, մենք երգում էինք, և, կարծես կրկնալի ոյժ ու զօրութիւն ստացած, դիրքից դիրք, քարից քար անցնում, գնդակներ տեղալով հակառակորդների գլխներին . . .

Մութն ընկաւ. կոիւը դադարեց. յաղթութիւնը փառաւոր էր. մերոնցից մի կաթիլ արիւն անգամ ընկաւ, մեր 12-14 հոգի և մէկ միլեազիմ կորցրած թըշնամու այրւած սրտերը հովացնելու:

## Վ Ա Ն

11/23 դեկտեմբեր 96 թ.

Աւրախալի երեոյթներ շատ կան:

Մեր վերջին կոիւները զուր չանցան. ժողովուրդը լիովին սթափւեցաւ, մեծ համակրանք կը ցուցնէ դէպի յեղափոխականը և յեղափոխութիւնը: Ըստ երեոյթին ալ հասկցեր է, որ հայի փրկութիւնը միայն յեղափոխութեամբ կըլլայ: Ոգեգորութեան յայտնի նշաններ կերեւան:

Յունիսին բանտարկւած օրիորդ Զարուհի Տէրոյեան արձակւած է 60 ոսկիի երաշխաւորութեամբ:

Կառավարութիւնը այստեղ ալ հայ պօլիսներ կը գրէ և գայմագամներու մուավիններ կը նշանակէ:

Յօտ ժամանակներս մեր քաղաքը եկան երկու ոռու քննիչներ, ասկէ Բաղէշ անցան, անկէ ուր գացին՝ յայտնի չէ:

Կառավարութիւնը թոյլ է, բոլորովին խաղաղ տրամադրութեան մէջ, հանդարտութիւն է ամենուրեք: Նայինք՝ վերջը ինչ կըլլայ . . .

\*\*\*

Վանայ վերջին հերոսական կուին մասնակցող մեր ընկեր հայդուկներից մի երկուսը ապահով տեղ են հասցրել իրենց վրայ արձակած թնդանօթի ոռումբերից մէկը, իրու փայլուն յիշատակ այդ անհաւասար կուի: Դա կը լինի պերճախօս ապացոյց ոչ այնքան հայդուկ-

ների յանդուգն անվեհերութեան, որքան իրենց դէմ դուրս ծկած բազմաթիւ զինւորական գնդերի ապշութեան և հարեմական կառավարութեան կատարեալ լքման:

## Ն Ա Մ Ա Կ Պ Ո Լ Ս Ի Ց

18/30 դեկտեմբեր 96 թ.

Վաղուց է, որ կը ջանայի գրել և „Դրօշակ“-ի ընթերցողներուն հետաքրքրութեանը փոքրիկ բաւականութիւն մը տալ, բայց մինչեւ ցարդ չէր յաջողւեր:

Պոլսոյ քաղաքական շրջաններուն մէջ Բարելոննեան իրարանցում մը կը տիրէ: Նելիդով՝ գալէն վերջ քանի մը անգամ պալատ գնաց, կըսեն, որ իբր թէ այս անգամ՝ սյնքան անուշ չի խօսիր սուլթանին հետ: Միայն բան մը ամենքն ալ կը հաստատեն, այն է, որ Ռուսը կուզէ միայն իր ուզած կերպով վերջ տալ Հայկական Սարսափներուն:

Արդէն յայտնի է, որ Տատեան Արթին փաշային ջանքով Օրմաննեան պատրիարք եղաւ: Այդ մարդը այնքան ալ որոշ մարդ մը չէ, թէւ կըսւի, որ—իբր ճիղկիտական դպրոցի մէջ ուսած, կրթւած Արդ մը—բաւական դիպլոմատ է, բայց վերջը տեսնենք:

Այսօր պաշտօնապէս Օրմաննեան և Տատեան միջնորդ կը հանդիսանան հայ ժողովրդին և մեր արիւնը լափող սուլթանին միջէ: Տեսնենք, կընա՞ն մեզ հաշտեցնել:

Հայ, յեղափոխականներուս լաւ ծանօթ նազըմ փաշան և անոր օգնականը՝ Հիւսէին պէյ ասպարեզէն իջան. մէկը աքսորի ենթարկւեցաւ, միւսը կըսեն, թէ նահանգապէտ է նշանակւած:

Նազըմին յաջորդող Շէֆիկ պէյը նորամուծութիւններ կընէ ոստիկանական նախարարութեան մէջ և նազըմի հաւասար եռանդով՝ „Երիտասարդ Թիւքերուն“ համակրողները կը ձերբակալէ: Այժմ սուլթանը աւելի անհանգիստ է, որովհետեւ հայ յեղափոխականներու հետ ասպարեզ կուգան և թիւքերը: Ի հարկ է երկու թշնամու հետ կուիլը աւելի դժւար է արդէն ջախջախւած, մոլորւած և հաշիւը կորուցած կառավարութեան մը համար:

Ոստիկանական նոր նախարարը շրջաբերական մը զրկեց բոլոր պանդոկներու, իւաներու տէրերուն, որպէսզի յաճախորդներէն անցագիր պահանջեն ու իրենց քով պահեն և մեկնելու ատեններն միայն, ոստիկանութեան իմաց տալէ յետոյ, անցագիրը տիրոջը դարձնեն:

Կըսւի թէ „Երիտասարդ Թիւքերուն“ գործելուն տակտիկան պիտի փոխւի:

Ամիստիայի առիթով հայերը խումբ-խումբ կազատին: Նախ անոնց լուսանկարները կը հանեն, ապա պատրիարքի երդմագրերով երգւեցնել տալով պատրիարքին քով՝ ազատ կը թողուն: Ազատողներուն մէջ կան 5-15 տարով դատապարտեալներ: Այդ պաշտօնական երդմագրերը ի միջի այլոց սա հատւածը կը պարունակէ՝ „Հաւատարիմ պիտի մնամ սուլթանին այնպէս, ինչպէս մինչեւ այժմ եղած եմ“:

Մենք ալ կուխտենք յանուն Ալլահին, յանուն մար-

գարեին և Մեծ-Մարդասպանին արևուն, որ Հաւատա-  
րիմ պիտի մնանք այնպէս, ինչպէս մինչեւ  
այժմ եղերենք . . .

Բանտարկեալներու կրած տանջանքներու մասին հարկ  
չկայ երկար կանգ առնելու: Դժոխքը մարդկային լայն-  
կեկ երեւակայութեան վերացական ստեղծագործութիւն  
է, իսկ մեր իրական կեանքը փորձով ցոյց տւաւ, թէ  
սուլթանի կառավարութիւն ընդունակ է նսեմացնելու  
այն երեւակայական դժոխքը: Այս չափը կը բաւէ ձեզի  
հասկցնելու:

Հիմա սկսած են հայերուն տները գրել. ամեն՝ տան  
մէջ քանի տղամարդ կայ, ինչով կզբաղին, կարձանա-  
գրեն։ Ամեն կերպ կը ջանան հային այնպիսի դրու-  
թեան մէջ դնել, որ հասկնան անոնց ամեն մէկ շաբ-  
ժումը։ Առ այժմ Բանկալթիի տները կը գրեն։

Պուլկարիայ գաղթած հայերը կը վերադառնան. ո-  
րոնք հարց ու փորձի ենթարկւելէ յետոյ իրենց տու-  
ները կերթան:

\* \* \*

13 յունվար 97 թ.

‘Նախորդ Նամակովս հաղորդեր. Եի բանտարկեալնե-  
րու արձակման լուրը: Բայց բանտը կը մնան դեռ 34 մահ-  
ւան դատապարտւածներ, 12 անվճիռներ և մէկ քա-  
հանայ՝ Աֆիօն-Գարահիսարէն բերւած. պարզ զրպար-  
տութեան զոհ է վերջինս: Չենք հասկնար, թէ ինչ կը  
դառնայ մեր պատրիարքարանի ու Նախարարաց շուրջը:  
Մէկ կողմէն ընդհանուր ներման իրատէն կարձակէ սուլ-  
թանը, միւս կողմէ անվճիռները կը մնան դեռ բանտե-  
րը: Հապա դաւառները: Երիզայի բանտարկեալները  
անշարժ կը մնան դեռ զնտանիներուն մէջ: Քանի՛ անգամ-  
ներ դիմումներ եղան պատրիարքարան. միշտ միւնոյն  
պատասխանը,—թէ կաշխատինք միւսներուն համար ար:

Արդեօք ի՞նչ մեկնութիւն տանք նոր ձերբակալու-  
թեանց անցեալները քանի մը արձակւածներ կրկին  
հարցաքննութեան տարին ու գիշեր մը պահելէն ետքը,  
պատրիարքարանի միջոցաւ նորէն արձակւեցան։ Նոր աք-  
սորի ձայներ կը լսւին։

Կուզէ՞ք ոստիկանութեան հարցաքննութեան մասին  
նմուշներ: — Պատմեմ համառօտակի:

Առաջին պայման՝ հարցաքննութեան կը տանին միշտ գիշերը, ժամը 4-5-էն վերջը։ Ոստիկանութեան տնօրէնը կսկսի հարցաբննել։ Նախնական սովորական հարցերէն յետոյ տաճկական պաշտօնեայի յատուկ ժպիտով, կեղծ անուշութեամբ ու շողոքորթութեամբ միայն „սէօյլէ” (խօսէ) կըսէ, իբր թէ ամբաստանեալը գիտէ արդէն, թէ ինչ պէտք է խօսիլ։ Եւ մի՛ արասցէ, եթէ փոքրիկ համոզում մը գոյացուցեր է իր մէջ, թէ մեղապարտ ես, կսկսի մէկերկու ժամ աղերսել այնպէս՝ որ կարծես մուրացկան լինի. իսկ կը տեսնէ թէ աղերսանքով չկրցաւ բան մը փրցնել, կսկսի հակառակը։ Յանկարծակի կը բռնկի և կը պոռայ, որ բերեն „թէրծիմանը” (թարգմանը)։ Խեղծ ամբաստանեալը չի հասկնար, թէ այդ ինչ թէրծիման է. Ժամանակ ալ չի մնար մտածելու։ Կը բերեն մէծ փայտ մը և կսկսին սոսկալի ծեծը, համեմած փողոցային ամենակեղտու հայհոյանքներով։ Նախարարին երկրորդը անընդհատ կը ծեծէ ու կը ծեծէ, մինչեւ որ յոդնին կը նստի, նորէն կը պոռկատայ, „սէօյլէ”, Մերժողական

պատասխանէն յետոյ դարձեալ ծեծ և հայհոյանք։  
Այսպէս 2 ժամ տանջելէ յետոյ ոչ մի պատասխան  
ստանալով՝ բանտ կուղարկեն կրկին։

Երկրորդ գիշերը դարձեալ կը տանին, ու կսկսի  
միւնոյն յանկերգը „սէջլէ“։ Չեղա՞ւ. — կը բերեն այս  
անգամ ուրիշ փայտ մը։ Մոցայ ըսելու, որ իւրա-  
քանչիւր փայտ իր յատուկ անունը ունի Առաջին  
փայտի անունը, ինչպէս ըսի, թէրժիման է։ Երկրորդը  
„դաշնակցական“ անունը կը կրէ։ Այս անունը հայե-  
րէն և թիւրքերէն գրւած է փայտին վրայ։ Այս վեր-  
ջինը՝ մէջը լեծ մատի հաստութեամբ երկաթ մ'է, վրան  
հաստ կարծր կաշի անցուցած, որու մինակ իրեն ծան-  
րութեամբ իջնելը կը բաւէ. հապա՞ վայլենի ուժով որ  
զարնեն . . . ծեծի ատեն ոստիկանները դատապարտեա-  
լը լաւ մը բռնած, երբ ուրիշ պաշտօնեաներ ու ոստի-  
կանք հանդիսատես են, կսկսին զայն հարւածել ու  
ծաղրել, ըսելով՝ թէ „ահա՛ ձեր սիրելի դաշնակցակա-  
նը. ինչու կը պոռաք՝ այս ձեր սուրբ հաւատքն էր.  
ասով կը պարծենայիք՝ թէ դաշնակցական ենք“, և այլն  
խօսքեր։ Կը զարմանային սակայն, որ ոչ մէկը կուլար։  
„Ի՞նչ է այս, կըսէին, չեն ալ լար։ Ծօ՛ ի՞նչ յամառ-  
էք. եթէ թիւրքի մը ապտակ զարնենք՝ հայրը ան-  
գամ կը մատնէ“։

ԵՐՐՈՐԴԸ „ՎԻԱՅՄ ԿԵՆԱԳՆ“ է. Հաստ ու ծանր վիայտ  
մը է, բազուկի հաստութեամբ սա ամենասոսկալին է:  
Կան նաև զանազան գործիքներ, օրինակ, իրանը մեջքէն  
վար կախելու, ու այդ դրութեան մեջ սոսկալի կեր-  
պով ծեծելու համար. ձեռքերն ալ գելարանի մը տակ կը  
դնեն և կոլորեն ևալին ևալին, որն ըսեմ բանտերուն  
մեջ ալ պահապաններն են, որոնք սոսկալի ծեծով  
միւտիրին պակասը կը լրացնեն: Եւ ասոնք այն ժամա-  
նակներն էին, երբ դեսպանները գիշերները ցերեկ ըրած,  
սուլթանի հետ բարեկարգութեանց ծրագիրներ կը  
պատրաստէին, ու երբեմն անամօթաբար քննիչներ կու-  
ղարկէին բանտերի դրութեանց մասին տեղեկութիւններ  
առնելու, եկողը անշուշտ թիւրք մ'էր. կամ ենթադրենք  
իրենցմէ ըլլայ, միւնոյն բանն է, որովհետեւ բանտերը  
հազար ու մի ծակ ու ծուկ, մութ խորշեր, զնտաներ,  
գետնափոր տեղեր ունին, զորս այցելուին բնաւ չեն  
ցոյց տար, այլ միայն մաքուր կարծւած „ՂՕՎՈՒՇՆԵՐԸ“,  
սրահները, ուր բոլորը միացած՝ խմբովին բանտարկւած  
են: Ի հարկէ, շատերը կը խաբւին ու նպաստաւոր  
լուրեր կը տանին:

Քանի մը շաբաթ առաջ Լօնտօնի ոստիկանութեան  
տնօրէնը (որ հոս էր) տեղւոյս բանտերուն այցելու-  
թեան եկած էր։ Սա Օսմանեան պանքայի տնօրէն Վին-  
սընդի եղբայրն է։ Այդ մարդը մինակ զօվուշների գըռ-  
ներէն ներս նայելով, բանտի եկեղեցին (սա Յունաց  
ժամանակէն մնացած փոքրիկ մատուռ մ'է, որովհետև  
այդ Կեղրոնական բանտը՝ ժամանակին յունաց Հոգե-  
ւոր համատառթիւն մ'է եղած ուխտաւորներուն յատ-  
կացեալ, մէջն ալ փոքրիկ մատուռ մը) այցելելով՝  
գոհ սրտով մեկնեցաւ, որ բանտի մէջ կրօնքի ազատու-  
թիւն ալ կը տիրէ... Սրատես անգլիացին հիացած մնաց...  
այնպէս որ, այդ հիացումը թիւրք թերթերուն մէջ ար-  
ձագանք գտաւ։ Այս թիւրքերը լաւ ուսումնասիրած են  
եւրոպացիները և գիտեն անոնց հետ վարւելու խորա-  
յանեռութիւնը կամ անոնց կովութիւնը։

# ଶ୍ରୀ କର୍ଣ୍ଣାନୀ ମହାତ୍ମା ଗାଁ ପାଦପଥ ପ୍ରକାଶନ

Արեւելեան հարցը ուռասկան քաղաքականութիւն և եղած է այժմ:

Ռուսաստանը կսպասէր այս օրին. անշուշտ առնվի սեւ օքեզու  
կսպասէ դեռ: Ռուսիրյ ամենազօր կայսրութեան շահը կը պահանջէ,  
որ Արեւելեան Տարցին ոչ ոք խառնւի, զի այդ իր բնական իրա-  
ւունքն է: Եւ այսօր այդ արջը իր թաթերուն տակ առած է սուլթա-  
նին գլուխիր եւ իր ամբողջ կառավարական զոյութիւնը: Երկար ա-  
տեն շոյեց խալիքային մօրուքը, քաջալերեց զայն, ամենանենգաւոր  
միջոցներով խաղուց Եւրոպական տէսութիւնները, մինչեւ որ Թիւր-  
քիան դրաւ այսպիսի ճահճային ոքութեան մը մէջ, որ չիւկօյի թշշ-  
ւառին աէս, քանի շարժի առելի վար կը խըի:

Նելիով՝ Թիւրքիայի այդ չար ոգին, եթք մէկ կողմէն կը պըն-  
լէք տէրութեանց ներկայացուցիչներուն, որ սուլթանի մքայ ճռ-  
շում՝ չի բանեցնեն, այլ ամեն բան անոր բարեհամ քէյֆին ձգեն,  
միւս կողմէն մահմետական խալիֆային պատանքը կը, կարէք: Եթք  
սուլթանը՝ աշխարհի առջև խաղք իւսոյտակ եղած, տեսաւ, որ ցա-  
լի կառավարութիւնն էր միայն, որ իրեն նենզաւոր ծեոքը կերկընց-  
նէք, կուրօրէն նետեց ինքայինք անոր զիրկը եւ եղաւ ցարի ճորտը

Թուսիա այնքան տուշ զնաց իր պքութեանը մէջ, այնքան ու-  
րախ է իր յաջողութեանը մէջ, որ երկու սնգամ՝ երկուք չորսի պէս  
կը հաւատայ, թէ Տաճկաստանի մասին դարենք ի վեր հազար ու  
մէկ գուրզուրանքով մնուցած երազը կատարւելու ժամանակը հա-  
սած է: Պտուղը հասեր-է, պէտք է կը լլ: Երբ Փրանսա իր դաշնա-  
կիցը եւ սեղանաւորը, առաջարկեց Թիւրքիոյ ելեւմուռքին քարեւկար-  
գութեան, նեղացաւ ցարի կառավարութիւնը, որ իր ոսկեզօծ երազ-  
ները կուզէին խափանել, Թիւրքիոյ նիւանդութեան դարման տանելով

Կըսեն՝ թէ Նելիոք՝ Բետքսակուրկ վերջին այցելութեան առեն  
իբ կտուակարութեան ներկայացուցելը է Պոլիսը և Ասիական եղերք-  
ները զինուորակէս զբաւելու յանդուզն ծրագիրը, բայց եւլումուական  
վիճակը եւ յախուն բաղկախնդրութեան մը հետեւանըները նկատ-  
ւելով մերժել է։ Այդ առթիւ ցարը լեզւի պոչով մը հրամայել է  
իր սիրական դեսպանին, որպէսզի աշխատի առլթանէն բարենորո-  
գումներ ձենք ընկրել, բայց . . . առանց Շնշումի. այսինքն կարեւո-  
րութիւն չի տալ:

Հիմա մշտեռը մարդ չէ կայ. ամեն ինչ ուռւսիոյ քաղաքականութեան առանցքին վրայ կը դառնայ եւ օրւան հերոսներն են ՆԵԼԻ-տօքն ու ԱՌԼԺԱՆԸ: Ճեռէն ամեն մարդ ապշած կը նայի, այդ հերոսներու քաջազործութեանց վրայ եւ սակայն ՍԵԼ-ԾՈՎՈՒ թուիս ալիքներուն վրայէն ոռսական նաւերը դէմի վրափոր կը նային:

Եթե նևիտօք ու սուլթանը գլուխ զլսի սակարելութենուլ գբա-  
ռած նու, Թիւրքիան կամսի զզաւ իր անդամանի կորուսոր, և նայ-  
նոյէ սուլթանին, որ իր առանը բանովելէն վերջը զնաց, իրմէ աւելի  
վայրագ կառավարութեան մը ծեղը լնելաւ: Այու և՛ յուսահանուցնէ  
Կրկըն ամենէն հեռանես ու սրտացաւ մարդիկը ու կարծես կակի-  
ծու համակերպութեալք մը կապասեն ճակատագրական բուգէն:

Թիւրքիոյ գոյութիւնը մազէ կախւած է: Եյսքան. մարտազո՞նը  
յաջողութիւն չի պարզեւեցին խելօ տութիւնին: Դրամ՝ չի կայ և  
ժողովութե բարոյական լինառութեան և նիւթական մասնկութեան  
մասնւած է: Այդ ամենափենթի տիպարը խորամանուկ բունակալու-  
ութեան, որոյ մուս բարոյական զէնքն էր իւաբել խաքիքել, յայտ-  
նապէս կը տեսնէ վեր, ուր դատապարած է զլորւելու: Սակայն  
չարուց ուեռ քան մը մտաքրած է ընել՝ ամբողջ երկերը իւ. հետ ու  
զահամեթել. նելիոօքին յայտարարեն է, „եթէ ևս իւալեֆաներու  
մերքին սեսի ուստի, չի՞ ու այլո սեման իուրիո իստիւ մը ուստի”:

„Թայմին“ կըսէ, վոր ճարտելու Յանձնք պուլթառու միան ողջ մը  
ունի, եր Վարչութիւնը քարեկարգել ու ծախսելը նւազնցնել։ Բայց  
կը յարէ, տարակուսնի է, որ Ազգիւլ-Համբաւ կարողանայ այժմ ո  
ու է քարենորոգում ընել, վասնգի-եր ծեռքով իր տունը փրանց։

‘*Unūmētū vīvū hū 218h. At R̄chimphī hūs vīvū hīvū unūdāwūh*’

Ռուսիոյ միջնւ գաղտնի դաշնակրութիւն Առ կայ: Ամեն պարագայի  
մէջ կենթադրենք՝ թէ այդ դաշնակրութեան ոգին սուլթանի անծին  
պահպանութիւնն ուլայու է, ոչ երկրին:

Մակայն գերմանական թիրթի մը տարածած անակնելաւ լուրեցուն նայելով, որ քառական ցնցողական է, առևթանը նելիոժի ծայրայնդ պահանջներէ բռնադատեալ, դիմել է երկու դեսպաններու միջնորդութեան, որպէսզի զի՞սքը հաշտեցնեն Սօլզուրիի հետ:

Ահա Թուսիոյ գաղտազուի լկամ յայտնի քաղաքաւկանութիւնը  
Թիւրքիոյ եւ արեւելեան ինուբոյն նկատմամբ։ Ժողովուրդները ջար-  
ռել տալ եւ յնույ տէր կանգնիլ անոնց ժառանգութեան։

Դարուս քաղաքականութեան բարոյականը . . .

Հետաքրքրութեան համար նելի հոգի եւ ցարի անսակցութեանը ալզաիկ դրուազ մը կը հրառարակենք, զոր հաղորդած է մեզի անծանօթ ոգին:

Յարը. Ի՞նչուէս, ԹՇԱՐԱԿՈՎ գործնը մելլ ուզածին ալէս լեկթա՞ն:

ՆԱԼԻՒՈՓ. Սքանչելի՞՝, ձեր օրով ևս հասնինք մեր իտէալին:

Յար. Պէտք եղածին պէս ջլատեցի՞՛ Թիւրքիան։  
Նելիտօվ. Ողջ կողմը չթողուցի։ Սուլթանը այսպէս որ Հարած

Յար. Հայելին լի՞նչ եղան:

ՆԵՐԻՄՈՔ. ՀԱՅԵՐԸ ՊԱՏԱԼԱՆ ԲԱԼՈՒՅԱԼԱՆ ՈՆ ՆԻՒԹԱԼԱՆ ՈՒԺ ՄՇԵԼԻ  
ՆԵՐԿՐԻՆ ՄԵԶ, ԶԱԼԻՉԱԽԵԼ ՄԵՒ ՆՈՅՆ իսկ ԱռՎԹԱՅՆԻՆ ՃԵԿՐՈՒՅ. ԹԻՒՐ-  
ՔԻԱՆ Այսօր զերո է, հայերուն կոտորւիլը մեր անգամ առևակէտով

all the time to:

Յար. Հովե, ինչ ոք կը նպաստէ իմ կայսրութեանս մհօնութեան,  
իսաբէ, շոյէ, կոստորել տուր եւայլն,

սելիով. Պէտք է խաղընել Եւրոպական դաշինութեալ, - հակառակի ո եւ է բարեկարգութեան, օնշում՝ չի բանեցնել առլթանին վրայ եւ պաշտպանել, որովհետեւ այս առլթանեն աւելի կործանալի վատիշա՛ չենք կարող գտնել: Բախտը բերաւ:

Բարեւիրած թագուհին, ոք ներկայ էս այդ ուժեղզական իօստեցութեան, յանկարծ մոջամտեց.-Արդեօք կարելի չէ՞ ըստ, մեղմ ձայնով մը, չայաստանի թշրառացած որքնեն ու այրինեն ալկոուրել տալ, բանի ոք անոէս, անօզնական էն: Կազմտին այս աշխարհի տառապանքներէն ու մարդկութեան իողան վրայ ընու ըլլար:

Տեղիոք բարացած շղերով պատասխանեց. - Հայով ալ ժննի-  
նակը կուզայ:

Տալը պուզել սկսում, բայց սալինը առաջաւ էր դժվար պայտ, և ըստ յանձնաբժիշխած նրա նրեւցաւ ան խօսքը՝ „Ճռուի աւ եղ վերջին օրը տեսաւ“:

Յաւալի է անշուշտ տեսնել, որ ահազին պետութիւն մը յիմար տութանի մը ապիկար ծեռքելուն մէջ խաղալիք եղած կը տառլուկի մահւան չուածառութեան մէջ: Տնիկ մը ծեռնութեան յոյս չի կայ: Թիւրքերը՝ դարաւոր սորկութեան տակ բթացած մորքն, անզօր են իրենց դժուկակ վիճակը ըստոնելու: Կարծես ամոն բան յանձնած են ՞ և ո՞ւ ի՞ն: Մոսայլ է ապագան, շարերը իոր արմատներ նետած է երկարին մէջ: Հաւաքական կամքի ուժով միայն թերեւ կարեւի է սովորակի վատանզին առաջքն առնել:

Դառն իփողծառութիւնը ու երևին ողբաշի վեհակը ստեղծեց ուր  
ուրեմն թիւը երիտասարդութեան մէջ զործնական յեղակիոլա-  
կան կուսակցութիւն մը: Հայկական ողոմքներէն յետոյ՝ թրդական  
ողոմքն է, որ պիտի պայթի Մեծ-Մարդասականի գլխուն: Յեղակո-  
իութեան փելիստիայութիւնը ողոմքն կը յանգի. Ոճրագործ խալիք  
ֆան կամ պէտք է ինընասատակութեամբ վերջ տայ իր արիւստ-  
ըու զոյութեան, կամ պէտք է փողոտի ժողովրդին վրէժինուրու-  
թեան տապարին տակ: Ուրիշ ժար չի կայ:

Ծշմարիստ կատակե-ողբերգութիւն մ'է Թիւրքիոյ կացութիւնը:  
Դիսալանները լքիւում կընեն Դրան Կրետէի մասին խոստումները  
կատարել եւ ժողովրդին պահանջներուն զոհացում տալ, սուլթանը  
մէյթէ զարչէ կը խոցնէ անոնց ու կը ճամփէ. սպառնալիքներ կը-  
նեն, ինքն աւ կապանայ հալածական ժողովրդին եւայլն, եւայլն:  
Այսպէս, մինչեւ որ երկու կողմէն մէկը ձարձրանայ: Բայց ինչպէս

կերեւի դեսպանները սկսած են քու և սու և ան ի սկզբանցնել սու թանի գօրեղ կամքին առջև։ Դժբախտաբար նրկիրը իր վեհապետին հաստատակամութիւնը չունի, և աղացը և ուշէ, և ու տանի։

Հիմա իրը թէ այդ արիւնոտ նողին վրայ բարինորդումներ պիտի սկսի գործադրւիք, թէ եւ բարենորդում։ ակունը կայ, ևնք չի կայ, եւ . . . այս սուլթանին ծեռքով։ Անհականավէ է, թէ սպանիշ ծեռքը կարնի է միանգաւան շինել։

Մարաշի գնդապետ Մազճար պէյի դատական խեղատակութիւնը բաւէ ցուցնելու համար, թէ սուլթանը որքան բարոյական արժէք կուտայ դեսպաններու պահանջին։ Մազճար պէյ, որ տպանիչն էր չայր Սալվատօֆի, մասպարտ արծակւեցաւ զինորբական ատենին կողմէ, թէ եւ կրսեն, որ նորէն դատի պիտի կանչի Գամպօնի պահանջման վրայ։

Հանօթօին ականչը խօսի։ շաբաթներ առաջ քրանսական խոր չըրքարանին մէջ մեծ-մեծ կը ջարդէր իր ազգին առջն, թէ ուրագործ պէյի խստիւ պիտի պատժի, որովհետեւ . . . Հանօթօի բութական ներշնչումը այսպէս կը թելադրէր . . .

Իսկ Պոլին սուլթանին լցո երեսը տեսնելու եկած երկու շոկան բիւրքերը, իրենց առատաձեռն վեհապետէն 9000 ուկի սպարգեւ սուսանով վերադարձան իրենց շահատակութեան վայրը։ Կըսեն՝ թէ գանծը պարապէ է, երբ մատնիչներ, դաւաճաններ, մարդասպաններ վարձատվելու գայ կարգը, չամսիսը շուտով կը զանէ։ Բարկուդիմու պէյին աւ, անոր տեղապահութեանը համար 4000 դահեկան ամսական յատկացրցած է . . . նաժիշտներ պահելու համար։

Սուլթանը իր անուկի ոժիքները վարագութելու համար, ընդհանուր ներում շնորհեց նայ բանարքեալներուն։ Բայց ինչպէս չխօս „Թումա Թերթը“ կը է, անգութ նեցութիւն մ՞է այդ ներումը, որ աւելի կոտորածին մասնակցող թիւրքերուն օգտին Է քան նայոց։

Եւ արդէն քանի փող կարժէ այդ Մեծ-Մարդասպանին ներում։ անբարյական մարդու մը գործին կարելի՞ է բարյական արժէք տալ Անմելիները ծերբակալել, յետոյ ի ծայն փողոյ կայսերական ներում շնորհել . . . քիչ մը մոտածել կուտայ մեզի։

Սուլթանը վարձի կապասէ արդեօք իր . . . վեհանծ սուլթեան փոխարէն . . .

Այս լեղութերը, որոնք բանտերու վժովային ամեն տանջանքները կը ելէ յետոյ կազատին, սուլթանի հականքամանով բռնի գաւառները կուղարելին։ Արդէն դեսպանները պացուցած են վատիշանին, թէ պյու ընթացքը ընդհանուր ներման ոգուն հակառակ է։

Ինչպէս կերեւի պատրիարք և Արքին վաշա լաւ գործիք նված են ծըլտղին։ Մեզի համար Արքին վաշա կամ պատրիարք նշանակութիւնը չունին իսկապէս, ինչպէս մինչեւ հիմա ալ շեն ունեցած։

Այլ վաշան արիւնաքամ ժողովութիւն իր վեհապետէն համար շնորհակալութեան ուղեկի կրթելու անոյ, թող համեցնէ անոր՝ թէ վայրենութիւն է անմեղ ժողովութիւնը մը խողխողել տալ, թէ զազանները զառագուղերու միայն արժանի են։

Հայի հացը, հայի փողը

Մինչեւ ե՞րբ սուլթանն ուտէ,

Եւ գարշելի պեղծ բերասով

Հայ անունը անարգէ։

Արթին վացան տղայական-սահմանական խաղերով ազգը թող չի խաղցնէ։ Մեր ու աւիմասումը դեսպաններուն չի նմանիր։

Իսկ պատրիարքը գերմանական թերթի մը թ՛ղթակցին չը շինեւթէ հայերը առաջանին գոյն են, հասգիս կապէին՝ թէ յելափոխականները ազգին կամքին հակառակ կը փործեն նւայլ։ Պատրիարքը, որչափ գիտենք, մոռած եւ բնագանցական զաղափարներով այլասեռած մարդ մ՞է, ի հարկին շողարութ, ի հարկին համակերպող, բայց ու բնաւ անսկուն ընութեան տէք, եւ ոչ աւ հաստատ ուղղութեան մը հետեւուց։

Մենք կը կարծենք թէ պատրիարքական իշխանութիւնը երթէք երաւուք չի տար մէկուն այդքան յախուն ըւալ եւ ազգի մը նիւթական զգացումը, ինչպէս յեղափոխութիւնը, սրբալողել երթ այդ ազգը նոյն իր ծխաշուն աւերակներուն վրայ մասվանք եւ յուսաւեց կը մասայ։ Ազգը երկերս պատրիարքներէ փորը կուշու է։

Համրի հաւ ու ուսուներուն վրայ, չնք գիտեր, ո՞րքան յոյս կարելի է դնել։

## ԿՐԵՏԱԿԱՆ ՀԱՐՑԸ

Կրետէի խնդիրը մինչեւ այսօր Հայկական հարցի նման սպասում է իր վերջնական լուծմանու ձիշտ է, թէ եւ սուլթանը եւ Եւրոպական մեծ պետութիւններն արդէն մի որոշ համաձայնութեան եկած են այդ խնդիրի նկատմամբ եւ նա արդէն վճռուած եւ Աբղիւլ-Համիդի իրադէտվ կնքւած էր դեռ սրանից 5-6 ամիս առաջ, բայց չէ որ այդ բոլորը . . . միմիայն թղթի վրայ էր։

Կրետէին խոստացած բէֆօրմներից գրեթէ գեռ ոչ մէկը չէ իրավործւած։ ո՞չ մի հիմնական փոփոխութիւն չէ մըտցըրւած կղզու կառավարչական մարմնու մէջ՝ չնայած այն փայլուն խոստումներին, որ տայիս եւ հաստատում էր սուլթանը Կրետական ապատամբութեանը վերջ դնելու համար։

Կրետացիք բողոքեցին մի քանի անգամ բէֆօրմների ձրգձղելու դէմ։ Բայց անօգուտ։ Դիպլոմատիայի գործելու տակտիկան սուլթանի վերաբերմամբ վաղուց է յայտնի Փոխանակ դիմելու աւելի գործնական միջոցների ոյժի, մըակ բանը, որի բարեկար ազգեցութեան տակ սուլթանը անմիջապէս կիրագործէ իր խոստացածի նոյն իսկ կրկնապատիկը, դիպլոմատիան զրա փոխանակ բաւականում է բ. Դուռն էլ „այօր-էգուց գցելով կամ երկղիմի պատասխաններով յետաձգում է բէֆօրմները։

Բայց ո՞չ վերջին հեռագիրները հաղորդում են, որ Կրետական ժամանակարմներիայի հարցը լուծելու վրայ է։

Այդ նշանաւոր բէֆօրմի հարցը երկար ժամանակ ձգձլում էր Սլովական պետութիւն ստացած այլազգիներ բայց սուլթանը մերժում էր՝ յայտարարելով, որ նա ամբողջապէս պիտի բաղկացած լինի մահմեդականներից։ Դեսպանները անյողդող պնդում էին իրենց առաջարկութեան վրայ։ Մենք սպասում էինք, որ գեսպանները այս անգամ յաղթող կը համուխանան։ բայց ո՞չ Այրուայ հեռագիրը հաղորդում է, որ այդ խնդիրը վճռեցաւ, բայց աւելի յօդուտ սուլթանին Այնպէս որ ժամանակարմներիան պիտի բաղկացած լինի բացառապէս մահմեդականներից, բաց առնելով մի քանի օտարահպատակ սպաններ, որոնք պիտի ընդունեին միմիայն առժամանակայի կերպով։ Սարը երկունքի մէջ էր եւ . . . մուկ ծնեց։

Իսկ թէ ե՞րբ եւ ի՞նչ ձեւավ, ի՞նչ կերպ պիտի իրագործեն Կրետական բէֆօրմների միջոցներու վրայ էր եւ . . . մուկ ծնեց։

Ահա թէ ի՞նչ արժէք, ի՞նչ գին ունեն Աբղուլի իրադէն, խոստումները՝ թողի իսկ կնքւած եւ հաստատած մեծ պետութիւնների ներկայացուցիչների սուրբազրութեամբ։

Եւ այսպէս, իրերի դրութիւնը կրետէ կղզում այժմ նոյնն է, ինչ որ ապատամբութիւնից առաջ էր։ նա մազաչափ անգամ չէ փոխւած։

Սպասութիւններ, յարձակումներ տաճիկների կողմից պահանձնաւ, չեն ամսիս Ամսիս Յիշ-ին, ինչպէս հեռագրում են Աթենքից ։ Դէյլի Նիւղ-ին, մահմեդականները՝ դարան մտնելով կրետէի մայրաքաղաք Կանէի մօտ, մի քանի անգամ հրացան են արձակում քրիստոնեաների վրայ։ որանից յետոյ տեղի է ունենում մի ընտիրուած սպանութեամբ։ սպանութեամբ 2 տաճիկ եւ 1 քրիստոնեայ։ Նոյնամսան գէպքեր պատահում են կղզու եւ այլ կէտերում։

կանէում մեծ յուզում է տիրում:

Բնդհանուր անքաւականութիւնը դնալով օր օրի զրայ սաստկանում, աճում է:

Կրետացիք՝ խաբւած սուլթանից եւ մանաւանդ Եւրոպական դիովօմատիայից, բարկութեամբ եւ վրէժիմողրութեամբ վառւած, լեցւած, վճռել են կրկին զէնքի դիմել. պատրաստութիւններ են տեսնուում: Յեղափոխական կօմիտէն արդէն յայտնել է Խտալիայի կամաւորներին՝ կազմ ու պատրաստ լինել եւ ապստամբութիւնը սկայթելուն պէս կրետէ անցնել:

Վերջին տեղեկութիւններին նայելով՝ ապստամբութիւնը կարող է բոնկտել այսօր կամ վաղը:

Ահա մի նոր սարսափ սուլթանի համար:

Հայաստան եւ Կրետէ, ներկայ րոպէիս միայն այս երկուան չեն, որ սարսափեցնում են Երլդըզ Քէօսքի հրէշ բանտարկեալին. ապստամբական ձայներ են լսւում, փոքրիկ ընդհարումներ են տեղի ունենում եւ Մակեդոնիայում:

Ճայթում, ճոճում, փլւում է ամեն կողմից Հիւանդ Մարդու խարխուլ կայսրութիւնը: Մի հարւած, մի հարւած եւո . . . ամեն բան վերջացած կը լինի:

## ՍՈՄԱՆԵԱՆ ԲԱՆԿԸ ՏԻՐՈՂ ՀԵՐՈՍՆԵՐԸ

Յայտնի է, որ բանկը աիրող հերոսները Մարսէլ բերւեցան: Ֆրանսիական ֆանթօշ կառավարութիւնը, հակառակ Եւրոպական պետութեանց ներկայացուցիչների տւած պաշտօնական խոստաման, մեր ընկերներին բանտը զբեց: Հերոսները բանտից բողոքեցին, ֆրանսիական մամուլի լաւագոյն մասը կատաղի յարձակւեց կառավարութեան վրայ եւ վերջինս ստիպւած եղաւ տղաներին հանել բանտից, միայն ֆրանսիայից բոլորովին աքսորւելու պայմանաւ:

Կառավարութիւնը իր այս որոշումը կատարեց ամենաստմարդի կերպով՝ նախ յանկարծակի երկու սկարագլուխներին՝ Գարօին եւ Հրազին Ժընէվ ուղարկեց, իսկ մնացած 15 հոգուն իրոխանակ Հիւսիսային Ամերիկա ուղարկելու, ինչպէս խոստացել էր, բոնի կերպով քշեց: Բուէնէս-Այրէս (Արգենտինեան հասարակապետութիւն Հարաւային Ամերիկայում): Այդպիսով հայրենիքի սիրուն ամեն բան զրհող եւ կրկին զրհելու պատրաստ հերոսները եւրոպական մեծ ազդի փոքրոդի կառավարութեան խաքեբայութեամբ ընկան այնպիսի մի երկիր, որը մեզնից հեռու է հազարաւոր մղոններով եւ ուր կարող էին բոլորովին անխնամ մնալ ու հայրենիքի կարօտից հալւել ու մաշւել:

Բայց այսօր, ի մեծ ցաւ Սուլթանի եւ նրա բարեկամ „մեծ հասարակապետութեան“ կարող ենք հրճանքով աւետել, որ Բուէնէս-Այրէս աքսորւած մեր ընկերներն արդէն Լօնդոն են գտնուում, բոլորովին հանդիսաւ ու ապահով դրութեան մէջ:

## ՎԵՐՁԻՆ ՑԵՂԵԿՈՒԹԻՒՆԵՐ

—Վերջին ժամանակներս Պոլսոյ դեսպանները կրկնապատկւած եռանդով են աշխատում: Պատրաստում են ըէ-

ֆօրմների նոր ծրագիր: Հայաստանի համար: Թէ ինչ տեսակ բէֆօրմներ են, դեռ ոչ ոք գիտէ. դեսպանները խիստ գաղտնի են պահում: Գաղտնապահութիւնը այն աստիճանին են հասցրել, որ Աւստրիական դեսպանատան մօտ, ուր տեղի են ունենում այդ խորհուրդները եւ վճիռները լուսու ուղատուհան փակ, նոյն իսկ կառավարաններին արգելւած է կանգնել:

„Թայմզի“ հեռագիրներին նայելով՝ այժմ դեսպանները ժողովում են շաբաթը չորս հինգ անդամ: Նրանք կարծում են, որ ծրագիրը պատրաստ կը լինի փետրւարի սկիզբներին:

—Պոլսից հեռագրում են „Տանի“ և ուստիկանութիւնը վնատրում է: Օսմանեան բանկի վրայ յարձակման ձեռնարկի երկու հեղինակներին, որոնք իսր թէ վերադարձել են Պոլսա:

ՍԻՄԱՏԻՈՒԹԻՒՆՆԵՐԻ ՑՈՒՑԱԿԸ

Բ. ք-ի Դաշնակցական ուսանողական խմբից ստաց. ւաճ. է 125 ֆր.

Տապար ք-ի Կեդրոն, սնդուկի մէջ ստացւած են.

Գաղթավայրից-Խնձորիկից՝ Մտածող 20 րուրլի, Մէլքով 10 րուր., • Համբարձում 25 րուր., Էջմաս 40 րուր., Հեյվա 20 րուր., Նառ 6 րուր.

Գահիրէի կօմիտէի սնդուկի մէջ ստացւած են.

Պերճ խուքը 80 դր. ողջ Սուրէնեան խումբ 65 դր. գ Երէկէն 10 դր., Ը. 5 դր., Բ. 5 դր. Սագո 10 դր., Միրիճեան 1 անգդ. ոսկի, Մէկը 5 դր. Գարհատ 5 դր:

Բօլգ. Վարնայի կօմիտէի սնդուկի մէջ ստացւած են.

Սրսէնից 10 ֆր., Սշոտից 5 ֆր 10 սենթ., Սրտաշից 2 ֆր., Արայից 3 ֆր., Ադվարդից 2 ֆր., Արամից 2 ֆր.

Պողպատ Խմբից 18 ֆր. 55 սանտ., Օր. Տ-ից 10 ֆր., Թորգոմեան Խմբից 9 ֆր., Կայճիկ 11 ֆր., Ներթաղիմից 5 ֆր. 10 սանտ., Կամաւորուց 50 ֆր., Վիրապներից 5 ֆր. 10 սանտ., Վ. Խաչատրուրեան Խիզանցուց 2 ֆր., Նոյից 1 ֆր.

Սուլինայի Դաշնակցական խմբից Սարգսեանի միջոցով 20 ֆր.

Սլիւնէի „Օժանդակ“ կօմիտէի միջոցով ստացւեց Բէրմենի կայարանի Հայ եղբայրներից 20 ֆր., Ծրբուն կայարանի Հայ եղբայրներից 40 ֆր.

Թատնէ Մահլէ 20 ֆր.

Վ. թ. ի ա կ: — „Դրօշակ“-ի այս տարւայ առաջն համարի մէջ տպւած է Գիլիպպօլի կօմիտէի սնդուկի մէջ ստացւած է 225 լէվ 20 ս.

Պէտք է լինէր՝ Գիլիպպօլի սնդուկի մէջ ստացւած է Թաթար-Բաղարջիկէն 225 լէվ 20 ս.

Խմբագրութեանս դիմել հետևեալ հասցեով՝

Rédaction du Droschak, Genève (Suisse)